ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 59-Ա

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի
12-րդ հոդվածի պահանջներով, ավագանին որոշում է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.

1.ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ.Կ.Էլլարյան/

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ.Կ.Էլլարյան/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՅՐԱՄՅԱՆ ՎԱՂԱՐՇ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴԳԱՐ
3. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ԵԳԱՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԷԼԼԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿՈՄԻՏԱՍ ԷԼԼԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 60-Ն

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է՝

1.Համայնքի ղեկավարի 2017թ. վարձատրության չափը սահմանել 175 000 /հարյուր յոթանասունհինգ հազար/դրամ :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՅՐԱՄՅԱՆ ՎԱՂԱՐՇ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴԳԱՐ
3. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ԵԳԱՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԷԼԼԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿՈՄԻՏԱՍ ԷԼԼԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք

sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 61-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ,8-րդ,9-րդ,10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով.համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի վարչական տարածքում 2017թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան,նոր շենքերի,շինությունների/ներառյալ ոչ հիմնական/շինարարության/տեղադրման/թույլտվության համար տեղական տուրք սահմանել

հիմնական օբյեկտների համար

1/մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում այգեգործական/ամառանոցային/տների,ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000/հինգ հազար/դրամ,

ոչ հիմնական հիմնական շինությունների համար՝

ոչ հիմնական հիմնական շինությունների համար՝

2/մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000/հազար/դրամ,

3/20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական,այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել.

1/ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝

հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ,

2/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինության ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել.

1/հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիք տարվա համար՝ 150000/հարյուր հիսուն հազար/դրամ,

2/համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 1քմ՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ:

5.Տեղական վճարների տեսակները

1/Համայնքի տարածքում շինարարության կամ արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000/հազար/դրամ:

2/Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,ետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500/հինգ հարյուր/դրամ:

3/Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 2000/երկու հազար/դրամ:
6.Ուժը կորցրած ճանաչել Սարիգյուղ համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 20-ի <Սարիգյուղ համայնքի տարածքում 2016թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>թիվ 55-Ն որոշումը:
7.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՅՐԱՄՅԱՆ ՎԱՂԱՐՇ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԷԴԳԱՐ
3. ԳՈՒԼԻՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
4. ԵԳԱՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԷԼԼԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿՈՄԻՏԱՍ ԷԼԼԱՐՅԱՆ